Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-165-14.02.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2011 թվականի նոյեմբերի 28-ի Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 55-րդ և 56-րդ կետերով.

«**55) օգտակար հանածոյի կանխատեսումային ռեսուրսներ՝** օգտակար հանածոյի ենթադրվող կուտակումներ, որոնց քանակը, որակը և տարածքային դիրքը գնահատված են ընդհանուր երկրաբանական նախադրյալների հիման վրա.

56) քաղաքացիական անհնազանդություն՝ հասարակության կողմից հավաքների կազմակերպման միջոցով իրականացվող բողոքի ակցիաներ, որոնք ուղղված են իշխանության կամ կառավարության կողմից վարած քաղաքականության կամ ծրագրի դեմ:**»:**

Հոդված 2. Օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.4.-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.4. Եթե ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերը չեն համապատասխանում օգտակար հանածոների պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգմանը կամ օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների և օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման

մեթոդական ցուցումների պահանջներին, կամ պաշարների գնահատման հաշվարկներում առկա են բացթողումներ.

1) լիազոր մարմինը դիտարկված բացթողումների մասին տեղեկացնում է դիմումատուին նյութերի լրամշակման նպատակով՝ սահմանելով լրամշակման համար հետևյալ ժամկետային սահմանափակումները.

ա. ոչ մետաղական հանքավայրերի համար՝ մինչև 30 օր.

բ. մետաղական հանքավայրերի համար՝ մինչև 120 օր:

2) եթե նշված բացթողումները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը և 3-օրյա ժամկետում ծանուցում դիմումատուին:»:

Հոդված 3. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվության ներկայացման կարգի, հաշվետվությունների ձևերի և լրացման ուղեցույցների սահմանումը.»:

Հոդված 4. Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «և հողամասի հատկացում» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 17-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25) օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների սահմանումը.»,

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 27-րդ կետով.

«27) օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումների սահմանումը.»:

Հոդված 6. Օրենսգրքի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 22. Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը**

1. Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումն այլ անձի, բացառությամբ սույն և 29-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի, արգելվում է:

2. Ընդերքօգտագործման իրավունքը փոխանցվում է իրավաբանական անձի վերակազմակերպման (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) դեպքերում՝ իրավահաջորդության կարգով բաժանիչ հաշվեկշռի կամ փոխանցման ակտի հիման վրա, լիազոր մարմնի համաձայնությամբ, որը տրվում է սույն Օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված ընթացակարգով:»:

Հոդված 7. Օրենսգրքի 23-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անձը, որը մտադիր է սույն օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում փոխանցել իրեն պատկանող ընդերքօգտագործման իրավունքը, լիազոր մարմին է ներկայացնում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման մասին դիմում:»:

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Դիմումը պետք է ներառի՝

1) իրավաբանական անձի լրիվ անվանումը, որին պատկանում է ընդերքօգտագործման իրավունքը.

2) նշում՝ փոխանցվող ընդերքօգտագործման իրավունքի մասին.

3) բաժանման, առանձնացման և վերակազմավորման դեպքերում՝ վերակազմակերպվող ընկերությունների ընդհանուր ժողովի կամ ժողովի առանձնացման, բաժանման մասին որոշումը, որի մեջ պետք է նշված լինի բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռը և վերջինիս համապատասխան՝ իրավահաջորդ ընկերությունների իրավունքների ու պարտականությունների բաշխումը: Լիազոր մարմնի համաձայնությունն ստանալուց հետո 20-օրյա ժամկետում ներկայացվում են նաև ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերող իրավաբանական անձի (այսուհետ՝ «ձեռք բերող իրավաբանական անձ») պետական գրանցման համարը, նշում այդ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի մասին, կանոնադրությունը, սույն մասի 5-րդ կետով սահմանված փաստաթղթերը, որոնցից յուրաքանչյուրի չներկայացումը Լիազոր մարմնի կողմից տրված համաձայնությունը չեղարկելու հիմք է:

4) միաձուլման, միացման դեպքերում՝ ձեռք բերող իրավաբանական անձի պետական գրանցման համարը, նշում այդ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի մասին, կանոնադրությունը, բաժանիչ հաշվեկշիռը,

5) սույն մասի 4-րդ կետով սահմանված դեպքերում ձեռք բերող իրավաբանական անձի.

ա. հավաստումը հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմման վերաբերյալ.

բ. հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները.

գ. մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

դ. ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը.

ե. ֆինանսական առաջարկները և երաշխիքները, որոնք պետք է ներառեն մանրամասներ հանքի աշխատանքի, կապիտալ և գործառնական ծախսերի վերաբերյալ.

զ. ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքը, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները.

6) հաշվետվություն ծրագրով կամ նախագծով նախատեսված աշխատանքների կատարման մասին, այդ թվում՝ նաև բնապահպանական միջոցառումների մասին.

7) հաշվետվություն ընդերքօգտագործման թափոնների կառավարման կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ:» :

Հոդված 8. Օրենսգրքի 23-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1. մասով.

«4. 1. Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ապա լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում վերացնում է նշված թերությունները: Դիմումին կից փաստաթղթերի ամբողջական և լրամշակված փաթեթը կրկին ներկայացնելուց հետո Լիազոր մարմինը 30-օրյա ժամկետում, որոշում է ընդունում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման համաձայնություն տալու կամ համաձայնություն տալը մերժելու մասին: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 24-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «գործադուլների, տնտեսավարողից անկախ պատճառներով ծառայությունների ընդհատումների՝ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և այլ դեպքերի, անհաղթահարելի ուժի՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլն, որոնք 90 օրվա ընթացքում անհնար են դարձնում աշխատանքների կատարումը» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 55.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի» բառերով:

Հոդված 11. Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասում «հետո» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքի 55.1-ին հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի» բառերը:

Հոդված 12. Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետում «պաշարների» բառից հետո լրացնել «գնահատման կամ» բառերը:

Հոդված 13. Օրենսգրքի 51-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետում «օբյեկտ է» բառերից հետո լրացնել «,բացառությամբ, եթե տվյալ օբյեկտի ընդերքօգտագործման իրավունքի կրողը դիմումատուն է և տվյալ հանքավայրի պաշարներն արդեն հաստատվել են իր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում.» բառերը:

Հոդված 14. Օրենսգրքի 55-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 55.1-ին հոդված՝

«**Հոդված 55.1. Ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգումը անհաղթահարելի ուժի հիմքով**

«1. Անհաղթահարելի ուժ են համարվում հրդեհները, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները կամ այլ բնական աղետները, ինչպես նաև պայթյունները, պատերազմը, ահաբեկչությունը, քաղաքացիական պատերազմը, քաղաքացիական անհնազանդությունը, որոնք ընդերքօգտագործողը չէր կարող կանխատեսել, կանխարգելել և որոնց հետևանքով ընդերքօգտագործողը չի կատարել կամ անպատշաճ է կատարել սույն օրենսգրքով և ընդերքօգտագործման իրավունքով սահմանված պարտավորությունները:

2. Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում, այդ հիմքով ընդերքօգտագործման գործող իրավունքի ժամկետները երկարաձգվում են առավելագույնն այդ հանգամանքների և ընդերքօգտագործողի բնականոն գործունեության համար խոչընդոտ հանդիսացող հետևանքների վերացման գործողության ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հանգամանքների ծագման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընդերքօգտագործողը այդ

հանգամանքների ծագման մասին գրավոր տեղեկացնում է լիազոր մարմնին: Նշված ժամկետում լիազոր մարմնին գրավոր չտեղեկացնելու դեպքում ընդերքօգտագործողի՝ լիազոր մարմին ներկայացված դիմումը քննարկման ենթակա չէ:

4. Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում այդ հիմքով ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հանգամանքների վերացման պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում ընդերքօգտագործողը կարող է լիազոր մարմին ներկայացնել դիմում: Դիմումում նշվում և դրան կից ներկայացվում են՝

1) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով թույլտվության ժամկետի երկարաձգման դեպքում՝ սույն օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ և 7-րդ կետերով սահմանված տեղեկությունները, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անհաղթահարելի հանգամանքները, դրանց տևողությունը և դրանց անմիջական ազդեցությունը հավաստող ապացույցներ և փաստաթղթեր, ինչպես նաև փոփոխված ժամանակացույցով նախագիծը.

2) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման դեպքում՝ սույն օրենսգրքի 42-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված տեղեկությունները, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անհաղթահարելի հանգամանքները, դրանց տևողությունը և դրանց անմիջական ազդեցությունը հավաստող ապացույցներ և փաստաթղթեր, ինչպես նաև փոփոխված ժամանակացույցով երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով ներկայացվող փոփոխված ժամանակացույցով նախագիծը կամ երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության նոր փորձաքննության ենթակա չէ, իսկ դրական եզրակացություն ստացած փորձաքննությունների ժամկետները համարվում են համապատասխանաբար երկարաձգված:

6. Դիմումը լիազոր մարմին մուտքագրվելուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը կայացնում է որոշում՝ դիմումը բավարարելու կամ մերժելու մասին:

7. Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ապա լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում վերացնում է նշված թերությունները: Դիմումին կից փաստաթղթերի ամբողջական և լրամշակված փաթեթը կրկին ներկայացնելուց հետո Լիազոր մարմինը 30-օրյա ժամկետում կայացնում է որոշում՝ դիմումը բավարարելու կամ մերժելու մասին: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով դիմումը բավարարելու դեպքում միաժամանակ փոփոխվում են ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում սահմանված ժամկետները, բայց ոչ ավելի, քան անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքների գործողության ժամկետով:

9. Դիմումը մերժվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հանգամանքների և ընդերքօգտագործման իրավունքով սահմանված աշխատանքների կատարման վրա դրանց անմիջական ազդեցության բացակայության դեպքում:»:

Հոդված 15. Օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասում «հետո» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքի 55.1-ին հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի» բառերը:

Հոդված 16. Օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետից հանել «եռամսյակային և» բառերը:

Հոդված 17. Օրենսգրքի 63-րդ հոդվածի 10-րդ մասում «նախնական գնահատված և կանխատեսումային պաշարները,» բառերը փոխարինել «նախնական գնահատված պաշարները և կանխատեսումային ռեսուրսները,» բառերով:

Հոդված 18. Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասում «Հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլ անհաղթահարելի ուժի» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 55.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված» բառերով:

Հոդված 19.

1. Սույն օրենքի 6-8-րդ հոդվածներով սահմանված՝ ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման կարգին առնչվող իրավակարգավորումները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո փոխանցման համար ներկայացված դիմումների վրա:

2. Սույն օրենքի 14-րդ հոդվածով լրացվող՝ Օրենսգրքի 55.1-ին հոդվածով սահմանվող՝ անհաղթահարելի ուժի հիմքով ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգմանը վերաբերող իրավակարգավորումները տարածվում են նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդերքօգտագործման իրավունք ստացած ընդերքօգտագործողների վրա, եթե անհաղթահարելի ուժը ծագել է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող չորս տարվա ընթացքում: Սույն մասում նշված դեպքերում ընդերքօգտագործողները Օրենսգրքի 55.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունները լիազոր մարմնին են ներկայացնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ անհաղթահարելի ուժի արդյունքում առաջացած հետևանքների հիմքով ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման համար նախատեսված դիմումը և դրան կից նյութերը ներկայացվում են Օրենսգրքի 55.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում.

1) Կառավարությունը հաստատում է օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվության ներկայացման կարգը, հաշվետվությունների ձևերը և լրացման ուղեցույցները.

2) ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմինը հաստատում է.

ա. օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները,

բ. օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումները:

4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~Առաջին~~ ***Երկրորդ ընթերցում***
Լրամշակված նախագիծ

~~**Կ-165-14.02.2022-ՏՀ-011/0**~~

Կ-165-14.02.2022-ՏՀ-011/1

Տեղեկանք

փոփոխվող հոդվածների

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2011 թվականի նոյեմբերի 28-ի Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին ~~2011 թվականի նոյեմբերի 28-ի~~ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 55-րդ ~~կետով~~ և 56-րդ կետերով.

«**55) օգտակար հանածոյի կանխատեսումային ռեսուրսներ՝** օգտակար հանածոյի ենթադրվող կուտակումներ, որոնց քանակը, որակը և տարածքային դիրքը գնահատված են ~~ուղղակի և անուղղակի տվյալների, ինչպես նա~~և ընդհանուր երկրաբանական նախադրյալների հիման վրա~~:~~.

56) քաղաքացիական անհնազանդություն՝ հասարակության կողմից հավաքների կազմակերպման միջոցով իրականացվող բողոքի ակցիաներ, որոնք ուղղված են իշխանության կամ կառավարության կողմից վարած քաղաքականության կամ ծրագրի դեմ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.4.-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~մասի առաջին պարբերությունը շարադրել հետ~~և~~յալ խմբագրությամբ.~~

«6.4 Եթե ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերը չեն համապատասխանում օգտակար հանածոների պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգմանը կամ օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների և օգտակար հանածոների հանքավայրերի

կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումների պահանջներին, կամ պաշարների գնահատման հաշվարկներում առկա են բացթողումներ~~, ~~. ~~ապա~~

1) լիազոր մարմինը դիտարկված բացթողումների մասին տեղեկացնում է դիմումատուին նյութերի լրամշակման նպատակով՝ սահմանելով լրամշակման համար հետևյալ ժամկետային սահմանափակումները.~~»:~~

ա. ոչ մետաղական հանքավայրերի համար՝ մինչև 30 օր.

բ. մետաղական հանքավայրերի համար՝ մինչև 120 օր:

2) եթե նշված բացթողումները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը և 3-օրյա ժամկետում ծանուցում դիմումատուին:»:

Հոդված 3. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվության ներկայացման կարգի, հաշվետվությունների ձևերի և լրացման ուղեցույցների սահմանումը.»:

Հոդված 4. Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «և հողամասի հատկացում» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 17-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25) օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների սահմանումը.»,

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 27-րդ կետով.

«27) օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումների սահմանումը.»:

Հոդված 6. Օրենսգրքի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«*Հոդված 22. Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը*

1. Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումն այլ անձի, բացառությամբ սույն և 29-րդ հոդվածներով ~~հոդվածով~~ նախատեսված դեպքերի, արգելվում է:

2. Ընդերքօգտագործման իրավունքը փոխանցվում է իրավաբանական անձի վերակազմակերպման (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) դեպքերում՝ իրավահաջորդության կարգով բաժանիչ հաշվեկշռի կամ փոխանցման ակտի հիման վրա, լիազոր մարմնի համաձայնությամբ, որը տրվում է սույն Օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված ընթացակարգով:»:

Հոդված 7. Օրենսգրքի 23-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անձը, որը մտադիր է սույն օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում փոխանցել իրեն պատկանող ընդերքօգտագործման իրավունքը, լիազոր մարմին է ներկայացնում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման մասին դիմում:»:

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Դիմումը պետք է ներառի՝

1) իրավաբանական անձի լրիվ անվանումը, որին պատկանում է ընդերքօգտագործման իրավունքը.

2) նշում՝ փոխանցվող ընդերքօգտագործման իրավունքի մասին.

3) բաժանման, առանձնացման և վերակազմավորման դեպքերում՝ վերակազմակերպվող ընկերությունների ընդհանուր ժողովի կամ ժողովի առանձնացման, բաժանման մասին որոշումը, որի մեջ պետք է նշված լինի բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռը և վերջինիս համապատասխան՝ իրավահաջորդ ընկերությունների իրավունքների ու պարտականությունների բաշխումը: Լիազոր մարմնի համաձայնությունն ստանալուց հետո 20-օրյա ժամկետում ներկայացվում են նաև ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերող իրավաբանական անձի (այսուհետ՝ «ձեռք բերող իրավաբանական անձ») պետական գրանցման համարը, նշում այդ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի մասին, կանոնադրությունը, սույն մասի 5-րդ կետով սահմանված փաստաթղթերը, որոնցից յուրաքանչյուրի չներկայացումը Լիազոր մարմնի կողմից տրված համաձայնությունը չեղարկելու հիմք է:

4) միաձուլման, միացման դեպքերում՝ ձեռք բերող իրավաբանական անձի պետական գրանցման համարը, նշում այդ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի մասին, կանոնադրությունը, բաժանիչ հաշվեկշիռը,

5) սույն մասի 4-րդ կետով սահմանված դեպքերում ձեռք բերող իրավաբանական անձի.

ա. հավաստումը հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմման վերաբերյալ.

բ. հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները.

գ. մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող բաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

դ. ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը.

ե. ֆինանսական առաջարկները և երաշխիքները, որոնք պետք է ներառեն մանրամասներ հանքի աշխատանքի, կապիտալ և գործառնական ծախսերի վերաբերյալ.

զ. ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքը, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները.

~~3) փոխանցման արդյունքում ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերող իրավաբանական անձի (այսուհետ՝ «ձեռք բերող իրավաբանական անձ») պետական գրանցման համարը, նշում այդ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի մասին.~~

~~4) ձեռք բերող իրավաբանական անձի հավաստումը հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմման վերաբերյալ.~~

~~5) ձեռք բերող իրավաբանական անձի՝ հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները.~~

~~6) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ ձեռք բերող իրավաբանական անձի «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.~~

~~7) ձեռք բերող իրավաբանական անձի ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը.~~

~~8) ձեռք բերող իրավաբանական անձի ֆինանսական առաջարկները և երաշխիքները, որոնք պետք է ներառեն մանրամասներ հանքի աշխատանքի, կապիտալ և գործառնական ծախսերի վերաբերյալ.~~

~~9) ձեռք բերող իրավաբանական անձի՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքը, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները.~~

~~10)~~6) հաշվետվություն ծրագրով կամ նախագծով նախատեսված աշխատանքների կատարման մասին, այդ թվում՝ նաև բնապահպանական միջոցառումների մասին.

~~11)~~7) հաշվետվություն ընդերքօգտագործման թափոնների կառավարման կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ:» :

Հոդված 8. Օրենսգրքի 23-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1. մասով.

«4.1. Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ապա լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում վերացնում է նշված թերությունները: Դիմումին կից փաստաթղթերի ամբողջական և լրամշակված փաթեթը կրկին ներկայացնելուց հետո Լիազոր մարմինը 30-օրյա ժամկետում, որոշում է ընդունում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման համաձայնություն տալու կամ համաձայնություն տալը մերժելու մասին: -Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 24-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «գործադուլների, տնտեսավարողից անկախ պատճառներով ծառայությունների ընդհատումների՝ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և այլ դեպքերի, անհաղթահարելի ուժի՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլն, որոնք 90 օրվա ընթացքում անհնար են դարձնում աշխատանքների կատարումը» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 55.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի» բառերով:

Հոդված 11. Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասում «հետո» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքի 55.1-ին հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի» բառերը:

Հոդված ~~11~~12. Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետում «պաշարների» բառից հետո լրացնել «գնահատման կամ» բառերը:

Հոդված ~~12~~13. Օրենսգրքի 51-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետում «օբյեկտ է» բառերից հետո լրացնել «,բացառությամբ, եթե տվյալ օբյեկտի ընդերքօգտագործման իրավունքի կրողը դիմումատուն է և տվյալ հանքավայրի պաշարներն արդեն հաստատվել են իր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում.» բառերը:

Հոդված ~~13~~14. Օրենսգրքի 55-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 55.1-ին հոդված՝

«*Հոդված 55.1. Ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգումը անհաղթահարելի ուժի հիմքով*

«1. Անհաղթահարելի ուժ են համարվում հրդեհները, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները կամ այլ բնական աղետները, ինչպես նաև պայթյունները, պատերազմը, ահաբեկչությունը, քաղաքացիական պատերազմը, քաղաքացիական ~~զանգվածային~~ անհնազանդությունը, որոնք ընդերքօգտագործողը չէր կարող կանխատեսել, կանխարգելել և որոնց հետևանքով ընդերքօգտագործողը չի կատարել կամ անպատշաճ է կատարել սույն օրենսգրքով և ընդերքօգտագործման իրավունքով սահմանված պարտավորությունները:

2. Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում, այդ հիմքով ընդերքօգտագործման գործող իրավունքի ժամկետները երկարաձգվում են առավելագույնն այդ հանգամանքների և ընդերքօգտագործողի բնականոն գործունեության համար խոչընդոտ հանդիսացող հետևանքների վերացման գործողության ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հանգամանքների ծագման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընդերքօգտագործողը այդ հանգամանքների ծագման մասին գրավոր տեղեկացնում է լիազոր մարմնին: Նշված ժամկետում լիազոր մարմնին գրավոր չտեղեկացնելու դեպքում ընդերքօգտագործողի՝ լիազոր մարմին ներկայացված դիմումը քննարկման ենթակա չէ:

4. Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում այդ հիմքով ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հանգամանքների վերացման պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում ընդերքօգտագործողը կարող է լիազոր մարմին ներկայացնել դիմում: Դիմումում նշվում և դրան կից ներկայացվում են՝

1) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով թույլտվության ժամկետի երկարաձգման դեպքում՝ սույն օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ և 7-րդ կետերով սահմանված տեղեկությունները, սույն հոդվածի 1-ին

մասով սահմանված անհաղթահարելի հանգամանքները, դրանց տևողությունը և դրանց անմիջական ազդեցությունը հավաստող ապացույցներ և փաստաթղթեր, ինչպես նաև փոփոխված ժամանակացույցով նախագիծը.

2) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման դեպքում՝ սույն օրենսգրքի 42-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված տեղեկությունները, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անհաղթահարելի հանգամանքները, դրանց տևողությունը և դրանց անմիջական ազդեցությունը հավաստող ապացույցներ և փաստաթղթեր, ինչպես նաև փոփոխված ժամանակացույցով երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով ներկայացվող փոփոխված ժամանակացույցով նախագիծը կամ երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության նոր փորձաքննության ենթակա չէ, իսկ դրական եզրակացություն ստացած փորձաքննությունների ժամկետները համարվում են համապատասխանաբար երկարաձգված:

6. Դիմումը լիազոր մարմին մուտքագրվելուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը կայացնում է որոշում՝ դիմումը բավարարելու կամ մերժելու մասին:

7. Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ապա լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում վերացնում է նշված թերությունները: Դիմումին կից փաստաթղթերի ամբողջական և լրամշակված փաթեթը կրկին ներկայացնելուց հետո Լիազոր մարմինը 30-օրյա ժամկետում կայացնում է որոշում՝ դիմումը բավարարելու կամ մերժելու մասին: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով դիմումը բավարարելու դեպքում միաժամանակ փոփոխվում են ընդերքօգտագործման իրավունքը հավաստող

փաստաթղթերում սահմանված ժամկետները, բայց ոչ ավելի, քան անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքների գործողության ժամկետով:

9. Դիմումը մերժվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հանգամանքների և ընդերքօգտագործման իրավունքով սահմանված աշխատանքների կատարման վրա դրանց անմիջական ազդեցության բացակայության դեպքում:»:

Հոդված 15. Օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասում «հետո» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքի 55.1-ին հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի» բառերը:

Հոդված ~~14~~16. Օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետից հանել «եռամսյակային և» բառերը:

Հոդված ~~15~~17. Օրենսգրքի 63-րդ հոդվածի 10-րդ մասում «նախնական գնահատված և կանխատեսումային պաշարները,» բառերը փոխարինել «նախնական գնահատված պաշարները և կանխատեսումային ռեսուրսները,» բառերով:

Հոդված ~~16~~18. Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասում «Հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլ անհաղթահարելի ուժի» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 55.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված» բառերով:

Հոդված ~~17~~19. ~~Եզրափակիչ~~ և ~~անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքի 6-8-րդ հոդվածներով սահմանված՝ ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման կարգին առնչվող իրավակարգավորումները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո փոխանցման համար ներկայացված դիմումների վրա:

2. Սույն օրենքի ~~13~~14-րդ հոդվածով լրացվող՝ Օրենսգրքի 55.1-ին հոդվածով սահմանվող՝ անհաղթահարելի ուժի հիմքով ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգմանը վերաբերող իրավակարգավորումները ~~(բացառությամբ՝ Օրենսգրքի 55.1-ին հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման)~~ տարածվում են նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդերքօգտագործման իրավունք ստացած ընդերքօգտագործողների վրա, եթե անհաղթահարելի ուժը ծագել է սույն օրենքն ուժի

մեջ մտնելու օրվան նախորդող չորս տարվա ընթացքում: Սույն մասում նշված դեպքերում ընդերքօգտագործողները Օրենսգրքի 55.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունները լիազոր մարմնին են ներկայացնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ անհաղթահարելի ուժի արդյունքում առաջացած հետևանքների հիմքով ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման համար նախատեսված դիմումը և դրան կից նյութերը ներկայացվում են Օրենսգրքի 55.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում~~4-րդ մասով սահմանված տեղեկատվությունը լիազոր մարմնին են ներկայացնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում~~:

~~3. Սույն օրենքի 13-րդ հոդվածով լրացվող՝ Օրենսգրքի 55.1-ին հոդվածի 5-րդ մասը տարածվում է Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի~~ և ~~57-րդ հոդվածի 2-րդ մասի վրա:~~

~~4~~3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում.

1) Կառավարությունը հաստատում է օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվության ներկայացման կարգը, հաշվետվությունների ձևերը և լրացման ուղեցույցները.

2) ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմինը հաստատում է.

ա. օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները,

բ. ~~պինդ~~ օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումները:

~~5~~4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-165-14.02.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	*ՀՀ կառավարությունն*	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին» բառերն առաջարկում ենք գրել «օրենսգրքի» բառից առաջ՝ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) լրիվ անվանման հիշատակումը համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին, միևնույն ժամանակ «55-րդ» բառերից հետո լրացնել «և 56-րդ կետերով» բառերով: Նախագծի 1-ին հոդվածով լրացվող նոր՝ 55-րդ կետից հանել «ուղղակի և անուղղակի տվյալներ, ինչպես նաև» բառերը, քանի որ նշված ձևակերպումը իրավական որոշակիության տեսանկյունից	Ընդունվել է: Լրամշակված նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է: Ընդունվել է:

			խնդրահարույց է: Առաջարկում ենք սահմանել «քաղաքացիա- կան անհնազանդություն» հասկացությունը:	Ընդունվել է: 1-ին հոդվածը լրացվել է նոր 56-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «56) քաղաքացիական անհնազանդություն՝ հասարակության կողմից հավաքների կազմակերպման միջոցով իրականացվող բողոքի ակցիաներ, որոնք ուղղված են իշխանության կամ կառավարության կողմից վարած քաղաքականության կամ ծրագրի դեմ:»:	Ընդունվել է:
2.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող պարբերության մեջ «բացթողումներ,» բառից հետո հանել «ապա» բառը, մնացած տեքստը շարադրել նոր խմբագրությամբ՝ «1), 2)» կետերով՝ պահպանելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերի պահանջները:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկում ենք Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 22-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ	Ընդունվել է: Նախագծի 6-րդ հոդվածում կատարվել է	Ընդունվել է:

			բովանդակությամբ. «1. Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումն այլ անձի, բացառությամբ սույն և 29-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի, արգելվում է:» Նկատի ունենալով, որ Նախագծի 6-րդ և 7-րդ հոդվածներով Օրենսգրքի 22-րդ և 23-րդ հոդվածներում կատարվող փոփոխությունների արդյունքում ընդերքօգտագործման իրավուն- քի փոխանցումը հանգում է միայն իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքին և ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման վերաբերյալ համաձայնություն տալու կարգին: Մինչդեռ Օրենսգրքի 29-րդ հոդվածի 5-րդ մասն էլ, ըստ էության, նախատեսում է ընդերքօգտագործման իրավունքի փոխանցում գրավառուին՝ հրապարակային սակարկությունները չկայացած հայտարարվելու դեպքում:	համապատասխան փոփոխություն:	
4.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասում տարանջատել վերակազմակերպման դեպքերը՝ նախատեսելով առանձին կարգավորումներ միաձուլում, միացում և բաժանում, առանձնացում, վերակազմավորում դեպքերի համար:	Ընդունվել է: 7-րդ հոդվածով լրացվող 2-րդ մասի «3), 4), և 5)» ենթակետերը ներկայացվել են նոր խմբագրությամբ:	Ընդունվել է:

			7-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերը հանել:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն, նշված կետերի դրույթները ներառվել են նոր խմբագրությամբ ներկայացված 7-րդ հոդվածով լրացվող 2-րդ մասի «3), 4), և 5)» ենթակետերում: Ըստ այդմ կետերի համարակալումը փոխվել է:	Ընդունվել է:
5.	*<< կառավարություն*	Նախագծի 8-րդ հոդված	Կատարել համապատասխան փոփոխություն, որով դիմումը կրկին անգամ ներկայացնելու օրը կսահմանվի Լիազոր մարմնի կողմից որոշման կայացման համար սահմանված ժամկետի հաշվարկման սկիզբ, քանի որ Օրենսգրքի 23-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված կարգավորման համաձայն՝ Լիազոր մարմինը դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որոշում է ընդունում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման համաձայնություն տալու կամ համաձայնություն տալը մերժելու մասին, սակայն հստակ նշված չէ, թե՝ Լիազոր մարմնի կողմից դիմումը ստանալու ժամանակ Օրենսգրքի իմաստով որ օրն է համարվելու նշված ժամկետի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հաշվարկման սկիզբը՝ դիմումը սկզբնական ներկայացնելու օրը, թե թերությունները շտկելուց հետո դիմումը ներկայացնելու օրը:		
6.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածում «ապստամբու- թյան» բառից հետո լրացնել «, ազգայնացման» բառը և կետադրական նշանը՝ նկատի ունենալով Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում ամրագրված կարգավորումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
7.	*ՀՀ կառավարություն*	10-րդ հոդվածից հետո լրացվել է նոր՝ 11-րդ հոդված	Լրացնել նոր 11-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 11. Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասում «հետո» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքի 55.1-ին հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի» բառերը:»: Առաջարկում ենք Նախագծի 14-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 55.1-ին հոդվածի 5-րդ մասում սահմանված կարգավորման գործողությունը Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի վրա տարածելու համար համապատասխան լրացում կատարել Օրենսգրքում՝ հղում կատարելով համապատասխան հոդվածին:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Ըստ այդմ լրամշակված Նախագծի հետագա համարակալումը փոխվել է:	Ընդունվել է:
8.	ՀՀ կառավարությու	Հոդված 12-րդ (Լրամշակված	Առաջարկում ենք 12-րդ հոդվածում (լրամշակված Նախագծի 13-րդ հոդված)	Ընդունվել է: Կատարվել է	Ընդունվել է:

	ն	Նախագծի 13-րդ հոդված)	«արդյունքում.» բառից հետո լրացնել «բառերը» բառը:	համապատասխան փոփոխություն:	
9.	ՀՀ կառավարությունն	Հոդված 13-րդ (Լրամշակված Նախագծի 14-րդ հոդված)	13-րդ հոդվածով (լրամշակված Նախագծի 14-րդ հոդված) լրացվող 1-ին մասից «քաղաքացիական» բառից հետո հանել «զանգվածային» բառը: 2-րդ մասում «այդ հանգամանքների» բառերից հետո լրացնել «և ընդերքօգտագործողի բնականոն գործունեության համար խոչընդոտ հանդիսացող հետևանքների վերացման» բառերը: 13-րդ հոդվածով (լրամշակված Նախագծի 14-րդ հոդված) Օրենսգրքում լրացվող 55. 1. -ին հոդվածի 7-րդ մասում առաջարկում ենք կատարել համապատասխան փոփոխություն, որով դիմումը կրկին անգամ ներկայացնելու օրը կսահմանվի Լիազոր մարմնի կողմից որոշման կայացման համար սահմանված ժամկետի հաշվարկման սկիզբ:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է: Ընդունվել է:
10.	*ՀՀ կառավարությունն*	Նախագիծը լրացվել է նոր՝ 15-րդ հոդվածով	Առաջարկում ենք Նախագծի 14-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 55.1-ին հոդվածի 5-րդ մասում սահմանված կարգավորման գործողությունը Օրենսգրքի 57-րդ	Ընդունվել է: Լրամշակված նախագծում լրաց- վել է նոր՝ 15-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ. «Օրենսգրքի 57-րդ հոդվածի	Ընդունվել է:

			հոդվածի 2-րդ մասի վրա տարածելու համար համապատասխան լրացումներ կատարել Օրենսգրքում՝ հղում կատարելով համապատասխան հոդվածին:	2-րդ մասում «հետո» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքի 55.1-ին հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի» բառերը:»: Ըստ այդմ հոդվածների համարակալումը փոխվել է:	
11.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 17-րդ հոդված (լրամշակված նախագծի 19-րդ	Վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		հոդված)	Անհրաժեշտ է հստակեցնել հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ Օրենսգրքի 55.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված տեղեկատվությունը օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում Լիազոր մարմին ներկայացնելու ժամկետի պահանջը:	Ընդունվել է: 2-րդ մասը ներկայացվել է նոր խմբագրությամբ: Հստակեցվել են դեռևս շարունակվող անհաղթահարելի ուժի ազդեցության կամ դրա հետևանքների դեռևս վերացված չլինելու պարագայում՝ ընդերքօգտագործողների կողմից համապատասխան տեղեկատվությունն ու ընդերքօգտագործման իրավունքի երկարաձգման մասին դիմումը ներկայացնելու ժամկետները:	Ընդունվել է:
			Առաջարկում ենք հոդվածի 3-րդ մասը հանել նախագծից, հաշվի առնելով սույն Ամփոփաթերթի 7-րդ և 9-րդ կետերով կատարված առաջարկությունները (Լրացվող նոր 11-րդ հոդվածի և 13-րդ (լրամշակված 14-րդ հոդված) հոդվածի վերաբերյալ առաջարկությունը):	Ընդունվել է: Կատարվել է համապատաս- խան փոփոխություն: Ըստ այդմ Նախագծի 17-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 19-րդ հոդվածի) մասերի համարակալումը փոխվել է:	Ընդունվել է:
			4-րդ (լրամշակված 3-րդ) մասի 2-րդ կետի		

			«բ» ենթակետից հանել «պինդ» բառը, քանի որ Նախագծի 2-րդ հոդվածով Օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.4-րդ մասի նոր խմբագրությամբ շարադրվող առաջին պարբերությունում, Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 27-րդ կետում կիրառված հասկացություններում այն բացակայում է:	Ընդունվել է: Լրամշակված նախագծի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետից «պինդ» բառը հանվել է:	Ընդունվել է: